քաղ. գործ թիվ ԱՎԴ3/0318/02/14

ՎՃԻՌ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

14.08.2014թ. ք. Վայք

Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանը

Նախագահությամբ դատավոր Հ. Դարբինյանի

Քարտուղարությամբ Ֆ. Հակոբյանի

Հայցվոր ՀՀ Վայոց Ձորի մարզպետարան
ներկ. Բ.Մարգարյանի
/ԱՄ 0461960,տրված 06.10.2011թ. 037-ից/

Դատարանում, դռնբաց դատական նիստում քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի ՀՀ Վայոց Ձորի մարզպետարանի ընդդեմ Արման Կորյունի Առաքելյանի՝ փոխառության պայմանագրով սերմացուի վճարման համար նախատեսված 144000 դրամի բռնագանձման պահանջի մասին

ՊԱՐԶԵՑ

<u>Նկարագրական մաս</u>

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Հայցվորը՝ փոխառության պայմանագրով սերմացուի վճարման համար նախատեսված 144000 դրամի բռնագանձման պահանջով 10.07.2014թ. դիմել է Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարան, հայցը վարույթ է ընդունվել, հայցին պատասխան, առարկություն կամ հակընդդեմ հայց չի ներկայացվել, գործով երրորդ անձինք չեն ներգրավվել, գործը դատաքննության չի նախապատրաստվել, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով գործը քննվել է պատասխանողի բացակայությամբ, հայցվորի կողմից պատասխանողի հետախուզում հայտարարելու մասին միջնորդություն չի ներկայացվել:

2. Հայցվորի դիրքորոշումը

Հայցվոր ՀՀ Վայոց Ձորի մարզպետարանի ներկայացուցիչ Բ. Մարգարյանը հայտնել է, որ ՀՀ Վայոց Ձորի մարզպետարանի և Վայոց Ձորի մարզի Գոմք համայնքի բնակիչ Արման Կորյունի Առաքելյանի միջև 28.09.2012թ. կնքվել է փոխառության պայմանագիր՝ աշնանային ցորենի առաջին վերարտադրության 900 կգ սերմացուի ստացման վերաբերյալ: Պայմանագրով փոխառուն պարտավորվել է մինչև 10.10.2013թ. հետ վերադարձնել ստացված սերմացուի քանակի յուրաքանչյուր 1 կգ-ի դիմաց 160 դրամ: Նշված գումարը կազմել է 144000 դրամ:

Խնդրել է Վայոց Ձորի մարզի Գոմք համայնքի բնակիչ Արման Առաքելյանից բռնագանձել 144000 դրամ, որպես 28.09.2012թ. փոխառության պայմանագրի հիմքով տրված սերմացուի դիմաց պարտք գումար:

Պահանջի իրավական հիմքեր է նշել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 880-881-րդ ,1035-րդ հոդվածներով սահմանված նորմերը:

Պատճառաբանական մաս

1. Գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ Վայոց Ձորի մարզպետարանի և Վայոց Ձորի մարզի Գոմք համայնքի բնակիչ Արման Կորյունի Առաքելյանի միջև 28.09.2012թ. կնքված փոխառության պայմանագրի համաձայն՝ փոխատուն պայմանագրով փոխառուին է հանձնում տեխնիկական բնութագրով նախատեսված որակի աշնանացան ցորենի առաջին վերարտադրության 900 կգ սերմացու, իսկ փոխառուն պարտավորվում է մինչև 10.10.2013թ. հետ վերադարձնել ստացված սերմացուի քանակի յուրաքանչյուր 1 կգ-ի դիմաց 160 դրամ: Նշված գումարը կազմել է 144000 դրամ: Պայմանագիրը կնքվել է Գոմք համայնքի ղեկավար Ստելլա Ակոպովայի մասնակցությամբ:

ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայքի տարածաշրջանի Գոմք համայնքի աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացու ստացողների ցանկի համաձայն, Արման Առաքելյանին տրամադրվել է 900 կգ. ցորենի սերմացու, որի համար ստորագրել է:

Պատասխանողը փոխառության պայմանագրով ստանձնած պարտավորությունը մինչ օրս չի կատարել և հայցվորի հանդեպ նրա պարտքը կազմել է 144000 դրամ::

2. Դատարանի իրավական վերլուծությունը, պատճառաբանությունները և եզրակացությունը

Քննության առնելով հայցադիմումը, լսելով հայցվորի ներկայացուցչին, բազամակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելով գործով ներկայացված ապացույցներն ու գնահատելով դրանք, համադրելով գործի փաստերը կիրառելի իրավական նորմերի հետ դատարանը հանգեց հետևյալին.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, պարտավորության ծագման հիմքերից է պայմանագիրը:

ՀՀ Վայոց Ձորի մարզպետարանի և Վայոց Ձորի մարզի Գոմք համայնքի բնակիչ Արման Կորյունի Առաքելյանի միջև 28.09.2012թ. կնքված փոխառության պայմանագրով հաստատված է, որ փոխատուն պայմանագրով փոխառուին է հանձնում տեխնիկական բնութագրով նախատեսված որակի աշնանացան ցորենի առաջին վերարտադրության 900 կգ սերմացու, իսկ փոխառուն պարտավորվում է մինչև 10.10.2013թ. հետ վերադարձնել ստացված սերմացուի քանակի յուրաքանչյուր 1 կգ-ի դիմաց 160 դրամ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 877-րդ և 878-րդ հոդվածների 1-ին մասերի համաձայն.

Փոխառության պայմանագրով մեկ կողմը /փոխատուն/ մյուս կողմի /փոխառուի/ սեփականությանն է հանձնում դրամ կամ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույք, իսկ փոխառուն պարտավորվում է փոխատուին վերադարձնել միևնույն գումարի դրամ/փոխառության գումարը/ կամ փոխատուից ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք:

Փոխառության պայմանագիրը կնքված է համարվում դրամ կամ այլ գույք հանձնելու պահից:

Փոխառության պայմանագիրը կնքվում է գրավոր:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

Պարտավորության ուժով, մի անձը /պարտապանը/ պարտավոր է մեկ այլ անձի /պարտատիրոջ/ օգտին կատարել որոշակի գործողություն, այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

Օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն, պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ, պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Հաստատված է, որ պատասխանողը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի նշված հոդվածներով և փոխառության պայմանագրի հիշատակված կետով սահմանված և հայցվորի հանդեպ նրա պարտքը կազմել է 144000 դրամ, որը ենթակա է բռնագանձման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն, պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ կատարելը:

Անդրադառնալով դատական ծախսերի բաշխման հարցին դատարանը գտավ, որ պատասխանողից ՀՀ պետական բյուջե պետք է բռնագանձել 2880 դրամ, որպես պետական տուրքի գումար:

<u>Եզրափակիչ մաս</u>

Առաջնորդվելով վերոգրյալով և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 110-րդ, 130-132-րդ, 140-րդ և 140՝ -րդ հոդվածների 1-ին մասերով դատարանը

ՎՃՌԵՑ

Հայցը բավարարել :

Արման Կորյունի Առաքելյանից հօգուտ ՀՀ Վայոց Ձորի մարզպետարանի բռնագանձել 144000/հարյուր քառասունչորս հազար/ դրամ, որպես 28.09.2012թ. փոխառության պայմանագրի հիմքով տրված սերմացուի դիմաց պարտք գումար:

Արման Կորյունի Առաքելյանից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 2880/երկու հազար ութ հարյուր ութսուն/ դրամ, որպես պետական տուրքի գումար:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում դա կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռը հրապարակման պահից մեկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան:

ԴԱՏԱՎՈՐ Հ. ԴԱՐԲԻՆՅԱՆ